ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-4-1-Ա

ք. Երևան 02,05.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի մայիսի 2-ի նիստում քննարկեց 2016 թվականի ապրիլի 7-ին «Ռուկար գրուպ» ՍՊԸ-ի «շիշ» (հայտ No20150649) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 107-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը վերարտադրում կամ ներառում է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ավելի վաղ առաջնության թվական ունեցող արդյունաբերական նմուշ, օգտակար մոդել կամ արդյունաբերական սեփականության ցանկացած այլ օբյեկտ, որի նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է այլ անձի: Տվյալ դեպքում հայտարկված ծավալային ապրանքյաին նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ շփոթելու աստիճան նման է «SAVERGLASS» (3 rue de la Gare, F-60960 FEUQUIERES (FR), DM 072510) ընկերությանը պատկանող արդյունաբերական նմուշին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «SAVERGLASS» ընկերությունն ունի գրանցված արդյունաբերական նմուշ (DM 072510) որի օգտագործման բացառիկ իրավունքը պատկանում է իրեն և ներկայացված շշի գրանցումը կարող է խախտել արդյունաբերական նմուշի իրավատիրոջ բացառիկ իրավունքները:

Փորձաքննության բաժնի պետը պնդեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ

հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Ռուկար գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «շիշ» (հայտ No20150649) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ